# ԹՎԻՆԻՆԳ ԾՐԱԳԻՐ

## Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ

*Գործողություն 6.1*
*Ջրի վիճակագրության և ջրի հաշիվների ընթացիկ կարգավիճակի գնահատում*



### Ընթացիկ իրավիճակի ներկայացում


Ստեֆանո Տերսինյի
Սիմոնա Ռամբերտի
Ջիովաննա Տալիակոզո
Դոնաթելլա Վինյանի

Իստատ - Իտալիայի ազգային վիճակագրական ինստիտուտ
Բնապահպանության բաժին
Ջրային ռեսուրսների և կլիմայի բաժանմունք


2016թ. փետրվարի 1-4, Երևան

Istat

# Իտալիայի ազգային վիճակագրական ինստիտուտ

**Ստեֆանո Տերսինյի**
Բաժնի պետ

**Սիմոնա Ռամբերտի**

**Ջիովաննա Տալիակոզո**

**Դոնաթելլա Վինյանի**






# Իստատի հիմնական գործունեությունը ջրային ռեսուրսների գծով



*ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ*

- ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ, ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԵՎ ՀԻԴՐՈԼՈԳԻԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ
  *Բնական ջրային ռեսուրսների գնահատում - Ջրային հաշվեկշիռ*
  *Արտակարգ իրավիճակների դեպքեր*
  *Կլիմայի փոփոխության ցուցանիշներ*
- ՔԱՂԱՔԱՅԻՆ ՋՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ
  *Համապարփակ տեղեկատվություն քաղաքային ջրի ոլորտի վերաբերյալ՝ ջրառից մինչև կեղտաջրերի մաքրում:*
- ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
  *Գյուղատնտեսություն*
  *Արդյունաբերություն*
  *Էներգաարտադրություն*

*ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ*

- Եվրոստատի աշխատանքային խումբ «Բնապահպանության վիճակագրության» գծով / Ենթախումբ «Ջրի վիճակագրության» գծով
  - ✓ ՏՀՋԿ/ Եվրոստատի հարցաթերթ – ՆԵՐՔԻՆ ՋՐԵՐ
  - ✓ Եվրոստատի հարցաթերթ – ՏԲՀ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ
- Եվրոստատ Ջրի հաշիվների գծով հատուկ հանձնախումբ /NAMEA/
- Եվրոստատ Ջրի հաշիվների և վիճակագրության գծով միացյալ հատուկ հանձնախումբ
- ՄԱԿ-ի ԵՏՀ Կլիմայի փոփոխությանն առնչվող վիճակագրության հատուկ հանձնախումբ
- ՄԱԿ-ի ԵՏՀ Արտակարգ իրավիճակների դեպքերի և աղետների չափման հատուկ հանձնաժողով



# Ջրի հիմնահարցերին առնչվող տվյալների հարցում միջազգային և ազգային մակարդակով

**ԵԲԴ (Եվրոպական բնապահպանական գործակալություն) –** Եվրամիության գործակալություն է, որի խնդիրն է տրամադրել շրջակա միջավայրի վերաբերյալ հուսալի և անկախ տեղեկատվություն:

ԵՎՐՈՍՏԱՏ - Եվրամիության վիճակագրական գրասենյակն է Լյուքսեմբուրգում: Այն Եվրոպայի մակարդակով Եվրամիությանն ապահովում է վիճակագրական տվյալների բազայով՝ հնարվորություն տալով երկրների և տարածաշրջանների միջև համեմատություններ կատարել:




## Ազգային հարցում

Տնտեսական զարգացման նախարարություն
Բնապահպանության նախարարություն
Առողջապահության նախարարություն
Գետային ավազանների կառավարման մարմիններ
Շրջաններ
Գիտական հանրություն

**ՄԱԿ (Միավորված ազգերի կազմակերպություն) –** միջկառավարական կազմակերպություն է, որը խթանում է միջազգային համագործակցությունը: Մասնավորապես ԵՏՀ ՄԱԿ (ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով) և ՊԳԿ (Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն):

**ՏՀԶԿ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն) -** միջազգային տնտեսական կազմակերպություն է, որի նպատակն է խթանել մարդկանց սոցիալ-տնտեսական բարեկեցությանը նպաստող քաղաքականության տարածմանը ողջ աշխարհում:

# Նախադրյալներ

- Մարդկային համակարգի և Բնության միջև փոխկապակցվածությունը հասկանալու համար առկա է **տեղեկության հրատապ անհրաժեշտություն:**

- **Վիճակագրական տեղեկությունը** հույժ կարևոր է մեր բարդ և արագ փոփոխվող աշխարհը հասկանալու համար:

- **Ազգային վիճակագրական գրասենյակերին կոչ է արվում ամրապնդել իրենց դերը**՝ նպատակ հետապնդելով բավարարել պաշտոնական վիճակագրության հանդեպ մեծացող պահանջարկը ազգային և տեղական մակարդակով, և գլոբալ տեսանկյունից՝ <u>բնապահպանական հիմնահարցերի </u>շուրջ:

- **Բավարարել սպառողների պահանջները, լրացնել տվյալների բացերը:**




**Հիմնական հասկացություններ՝**

- Հղման միջազգային շրջանակ
- Միջազգային ցուցանիշներ
- Համադրելիություն, որակ
- Ազգային վիճակագրական համակարգ, ԱՎԳ-ներ
- Տեղեկություններ տրամադրողներ
- Ուղեցույցներ և առաջարկություններ
- Համագործակցություն, համակարգում
- Տերմինաբանության, սահմանումների, մեթոդաբանությունների ստանդարտացում,
- Ինտեգրացիա, բազմակողմանի մոտեցում

## Հղված միջազգային վիճակագրական շրջանակներ

ապահովել ուղեցույցներ, սահմանումներ, ստանդարտացում

սահմանել միջազգայնորեն համադրելի վիճակագրական տվյալներ

- **Բնապահպանության վիճակագրության մշակման շրջանակ (FDES 2013) – ՄԱԿ-ի վիճակագրական բաժին**
- **Բնապահպանական և տնտեսական հաշիվների համակարգ (SEES-CF-2012)**

Ազգային վիճակագրական գրասենյակների դերը

*Հատկապես բնապահպանության վիճակագրության ոլորտում **տարբեր աղբյուրներից և տվյալներ արտադրողներից** ստացված մեծ քանակությամբ չմշակված դիտարկումների և չափումների առկայությունը կոչ է անում ուժեղ **համակարգման, համագործակցության և փոխգործակցության:***

## ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ - ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ - ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ - ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԴԵՊՔԵՐ ԵՎ ԱՂԵՏՆԵՐ


















# Օգտակար է հիշել, որ…

**Ջուրը կենսական է կյանքի համար:**

Այն **նախապայման** է *մարդու, կենդանիների և բույսերի կյանքի* համար և անփոխարինելի ռեսուրս *տնտեսության* համար: Ինչպես հայտնի է, ջուրը նաև առանցքային դեր է խաղում կլիմայի կարգավորման շրջափուլում:

**Ջուրն էական նշանակություն ունի հավասար և կայուն սոցիալ-տնտեսական զարգացման հասնելու հարցում:**



**Ջուրը մարդու իրավունք է:**

Ջրային ռեսուրսների **պաշտպանությունը** (թարմ և աղի ջրերի էկոհամակարգերը, խմելու և լողանալու ջրերը) անխուսափելի է, հետևաբար Եվրոպայում շրջակա միջավայրի պահպանության անկյունաքարերից է հանդիսանում:

**Ջուրը սահմանափակ ռեսուրս է, այդուհանդերձ պետք է ռացիոնալ օգտագործվի :**

**Ի՞նչ շրջանակներում է սահմանվում ջրի քաղաքականությունը:**

| | |
|---|---|
| Ջրամատակարարման և սանիտարահիգիենիկ ծառայությունների բարելավում I | Ջրերի առաջարկի և պահանջարկի կառավարում II |
| Շրջակա միջավայրի և ջրային ռեսուրսների վիճակի բարելավում III | Արտակարգ հիդրոօդերևութաբանական դեպքերին հարմարեցում IV |

Ջրի անվտանգություն

# Ջրային ռեսուրսներին առնչվող հարցեր



### Ի՞նչ է տեղի ունենում:

Մեծանում է ջրային ռեսուրսների ծանրաբեռնվածությունը՝ պայմանավորված

- Բոլոր ոլորտներում (քաղաքացիական, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, էներգետիկա, զբոսաշրջություն) ջրի պահանջարկի աճով,
- Կլիմայի փոփոխության ազդեցություններով:

### Ի՞նչ է պետք անել:

- Նվազեցնել ջրային ռեսուրսների ծանրաբեռնվածությունը
- Ավելացնել ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը
- Կրճատել ջրի կորուստը
- Բարելավել ջրային ռեսուրսների որակը

### Ի՞նչ պահանջվում պաշտոնական վիճակագրությունից:

Ապահովել բարձրորակ վիճակագրական տեղեկություններ՝

արժանահավատ, համատեղելի, պատեհաժամ, համադրելի, մատչելի, «տարածաշրջանային»:

# Ինչպե՞ս բնութագրել ջրային ռեսուրսները (ՋՌ)

Ո՞Վ

ԻՆՉՊԵ՞Ս

Բնապահպանության վիճակագիրները, ջրային ոլորտի փորձագետները, ազգային հաշվներ վարողները, ջրաբանները, քաղաքականություն մշակողները պետք է կարողանան հաղորդակցվել՝ օգտագործելով ընդհանուր լեզու… Դրան հասնելու համար անհրաժեշտ է միասնաբար աշխատել:

Ջրի վիճակագրությունը (ՋՎ) և Ջրի հաշիվները (ՋՀ) կազմում են ինտեգրացված ծրագրի մաս, որտեղ ՋՎ-ն ապահովում է ջրին առչվող փոփոխականների և ցուցանիշների ցանկը, իսկ ՋՀ-ը չափում է հիդրոլոգիական համակարգի և տնտեսության փոխազդեցությունները:

ԽԹԱՆԵԼ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ

Ջրային ռեսուրսները որակյալ տվյալներով նկարագրելու նպատակով կառուցվածքային տեղեկատվական համակարգ ունենալն անխուսափելի է հետագա մշակումների ու խորքային վերլուծության համար…
ՋՀ-ը հանդիսանում են բացառապես ՋՎ հետևանք:
ՋՎ-ն ընկած է ՋՀ-ի հիմքում:

# Ջրի վիճակագրությունից դեպի Ջրի հաշիվներ

**1970** Շատ երկրներ սկսեցին կազմել **բնապահպանության վիճակագրությունն** 1970-ական թվականներին, իսկ ՏՀԶԿ-ն սկսեց տվյալների հավաքագրումը հարցաթերթերի միջոցով 1980-ական թվականներին:

**1990** **Բնապահպանական և տնտեսական հաշիվների վարումը** ավելի նոր ոլորտ է վիճակագրության մեջ, որը գրավել է վիճակագիրների ուշադրությանը վաղ 1990-ականներին:

Մինչդեռ ՋՎ-ը տրամադրում է տարբեր տվյալներ կոնկրետ թեմաների վերաբերյալ, **ՋՀ-ի նպատակն է ինտեգրել տարբեր մասերը և ապահովել համակցված «պատկեր»**՝ ընդգծելով բարդ համակարգի տարբեր տարրերի միջև փոխհարաբերությունները:




ՋՀ և ՋՎ կազմելու հիմնական նպատակն է բացահայտել սոցիալական, տնտեսական կամ բնապահպանական ծանրաբեռնվածությունը և վերահսկել համապատասխան քաղաքականությունները:

# Եվ հետո, ինչպիսի՞ տվյալներ են մեզ անհրաժեշտ:






## Սկսելով փաստացի տվյալներից...

Հիդրոօդերևութաբանական տվյալներն ավանդաբար հավաքագրվել են ջրային ռեսուրսներին վերաբերող մի քանի տիրույթում:

Եվրոստատը և ՏՀԶ կազմակերպությունը համատեղ ջանքերով հավաքագրել են Ջրի վիճակագրությանն առնչվող տվյալներ Ներքին ջրերի վերբերյալ միացյալ հարցաթերթի միջոցով:

Ներկայիս ջրի հիմնահարցերը հասկանալու համար պահանջվում է միայն որաշակի տվյալների ենթաբազմություն: Բազմաթիվ այլ փորձագիտական ոլորտի տվյալներ անհրաժեշտ են ջրի և մարդկային բարեկեցության բարդ փոխհարաբերությունները հասկանալու համար:

## ...շարժվել դեպի բազմակողմանի մոտեցում:

Տվյալները պետք է միավորել, վերլուծել և վերածել օգտակար տեղեկատվության քաղաքականություն մշակողների, հանրության, ղեկավարների և հետազոտողների համար: Այն պետք է ունենա համապարփակ հայեցակարգային շրջանակ՝ տվյալների ինտեգրման և քաղաքականությանը պիտանի տեղեկատվության վերափոխման գործընթացն ուղղորդելու համար:
Այս նպատակով ՄԱԿ-ն ընդունել է ԲՏՀՀ-Ջուրը (Բնապահպանական և տնտեսական հաշիվների համակարգ) որպես հայեցակարգային շրջանակ, իսկ Եվրոստատը՝ Փաստացի ջրային հոսքերի հաշիվներ (ՓՋՀՀ), որը շատ մոտ է ԲՏՀՀ հայեցակարգային շրջանակին:



Istat

## Ջրի վիճակագրություն և Ջրի հաշիվներ – տեղի է ունենում այն, որ…



- 2003թ.-ին հաստատված և 2008թ.-ին վերափոխված Բնապահպանական հաշիվների եվրոպական ռազմավարությամբ (ԲՀԵՌ) առաջարկվել է ջրամատակարարման և ջրօգտագործման հաշիվները դիտարկել որպես զարգացման գերակա ոլորտ:

- Եվրոստատը և ՏՀԶ կազմակերպությունը համատեղ ջանքերով հավաքագրել են Ջրի վիճակագրությանն առնչվող տվյալներ Ներքին ջրերի վերբերյալ միացյալ հարցաթերթի միջոցով:

- 2012թ.ի նոյեմբերին DIMESA-ն հավանություն է տվել Ջրի վիճակագրության և հաշիվների գծով միացյալ հատուկ հանձնախմբի ստեղծման առաջարկին, որը պետք է գաղափար մշակեր և նախագծեր Ջրի վիճակագրության և Ջրի հաշիվների ներկայացման միասնական համակարգը:

- Եվրոստատը Ջրի վիճակագրության վերանայման (արդիականացում, պարզեցում) և Ջրի հաշիվների հաստատման փուլում է: Ջրի հաշիվների մշակումը 2014-2018թթ. Բնապահպանական հաշիվների եվրոպական ռազմավարության բաղկացուցիչ մասն է կազմում:

- Եվրոպական շատ երկրներ դեռևս չեն մշակել Ջրի հաշիվներ:

- Նույնիսկ Իտալիայում Ջրի հաշիվների համակարգը դեռևս ձևավորված չէ… Մենք նոր ենք սկսում: Ջրային ռեսուրսների գնահատման և հանրային օգտագործման ջրի վերաբերյալ ուղեցույցի պատրաստումը իրականացրել է Իստատը:

- Եվրոպայում տվյալների հասանելիությունը (Ջրի վիճակագրություն) բավարար չէ փաստացի ջրային հոսքերի հաշիվների աղյուսակներ «լցնելու» համար:

## Եզրակացություն՝ անհրաժեշտ է ավելի լավ ջրի վիճակագրություն:

**Իտալիան և Հայաստանը աշխատում են համատեղ՝ նպատակ ունենալով կազմակերպել և կատարելագործել Ջրի վիճակագրությունը Հայաստանում և Ջրի հաշիվների մշակումը:**
**Հեշտ չի լինելու, բայց հաստատ ԱՐԺԵ՛:**

Istat




*Ստեֆանո Տերսինյի (stefano.tersigni@istat.it)*
*Ջիովաննա Տալիակոզո (tagliaco@istat.it)*
*Սիմոնա Ռամբերտի (ramberti@istat.it)*
*Դոնաթելլա Վինյանի  (vignani@istat.it)*

*Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության վարչություն*
*Բնապահպանության բաժին – Ջրային ռեսուրսների և կլիմայի բաժանմունք*
*Իստատ– Իտալիայի ազգային վիճակագրական ինստիտուտ*